

ՀՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ
ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ ԵՐԿԵՐՈՒՄ

Ինչպես հայտնի է, Ղազար Փարպեցին ստեղծագործել է V դարի վերջերին՝ ճիշտ այն շրջանում, երբ հունարենը սկսել էր զգալի ազդեցություն գործել հայերենի վրա: Թեև Հ. Մանանդյանը «Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները» աշխատության մեջ արծարծում է այն միտքը, թե հունաբան դպրոցի երկերը սկզբնավորվել են «սկսած վեցերորդ դարի սկզբներից կամ հինգերորդ դարի վերջերից, ուրեմն գլխավորապես վեցերորդ և յոթներորդ դարերում»¹, բայց և այնպես, հետագա ուսումնասիրողները, հենվելով որոշ փաստերի վրա, վկայում են ավելի շուտ սկզբնավորվելու մասին: Նկատի ունենալով Մանանդյանի կարծիքը՝ Գ. Զահուկյանը գրում է. «Այս կարծիքը հիմնված էր լոկ ենթադրությունների վրա՝ առանց որևէ հաստատուն փաստարկ ունենալու»²: Պարզվում է, որ Հ. Մանանդյանը, առանց լուրջ պատճառ ունենալու, Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն» գրքի մեջ եղած ամսաթվերը համարում է ձեռագրական աղճատում և «սրբագրելով» ստանում 552-556 թթ.: Մինչդեռ նույնի տոմարական հաշիվներով Գալուստ Տեր-Մկրտչյանն արդեն իսկ պարզել էր այդ թարգմանության ժամանակը, որ համընկնում է 480 թ. փետրվարի 23 - 484 թ. փետրվարի 28 քառամյակին³: Առավել հավանական համարելով այս վերջինը և նկատի առնելով, որ հիշյալ երկից երկուերեք տասնամյակ առաջ կարող էին թարգմանված լինել Թրակացու քերականությունը և առաջին հունաբան թարգմանություններին պատկանող մյուս գործերը, Մ. Աբեղյանը հանգում է հետևյալ եզրակացությանը. «.... հունաբան դպրոցի սկիզբն ընկնում է 5-րդ դարի երրորդ քառորդին՝ 450-475 թթ.»⁴ : Այս վերջին տեսակետն ընդունում է նաև Գ. Զահուկյանը: Եվ ի լրումն նշյալի՝ բերում է այլ

¹ Հ. Մանանդյան, *Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները*, Վիեննա, 1928 թ., էջ

² Գ. Զահուկյան, *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում*, Ե., 1954, էջ 50:

³ Գ. Տեր-Մկրտչյան, «Արարատ» ամսագիր, Վաղարշապատ, 1908, էջ 564-589:

⁴ Մ. Աբեղյան, *Հայոց հին գրականության պատմություն*, հ. 1, Ե., 1944, էջ 101-102:

փաստարկներ⁵: Ա. Մուրադյանը նույնիսկ կարծում է, թե հունաբան դպրոցի առաջին թարգմանությունները կատարվել են V դարի առաջին կեսին⁶:

Հունաբան դպրոցի ամենալուրջ և ամենակարևոր քայլը, ինչպես հայտնի է, հունարենի հետևողությամբ հայերենի բառակազմական հնարավորությունների ընդլայնումն է: Այս առումով հատկապես կարևոր նշանակություն ունի հայերենի բառարմատների լայն գործածությունը որպես համարժեք հունարենի նախաամասնիկներին: Հունաբան նախածանցների որոշակի ցանկ տալիս է Հ. Աճառյանը⁷: Այլ ուսումնասիրողներ այս ցուցակին ավելացնում են ուրիշ նախածանցներ ևս: Օրինակ, Ս. Ղազարյանի «Հայոց լեզվի համառոտ պատմություն» աշխատության մեջ ներկայացված են նաև հետևյալ նախածանցները՝ *ջոկ-*, *պատ-*, *թափ-*, *բակ-*, *համ-*, *նախ-*⁸: Լ. Հովսեփյանը «Գրաբարի բառակազմությունը» գրքում, որպես «հունարենի հետևողությամբ ստեղծված նախածանցներ», Հ. Աճառյանի առանձնացրածին ավելացնում է *բաղ-*, *թեր-*, *համ-*, *նախ-*, որպես փոխառյալ նախածանցներ էլ նշում է *անտի-*, *արք-*, *քոր-*⁹: Այսպիսով, ելնելով վերոհիշյալից՝ հունաբան նախածանցներով են Փարպեցու գործածած հետևյալ բառերը՝ *թերակատար*, *թերահալատ*, *համածին*, *համարձակաձայն*, *նախագիւտ*, *նախադնեմ*, *նախաստեղծ*, *նախասպան*, *շարագիր*, *շարագրեալ*, *վերաբերիմ*, *տարակոյս*, *քորեպիսկոպոս*¹⁰: Ակնհայտ է, որ նշյալներում նախաբաղադրիչները իմաստային որոշակիություն ունեն և լիովին տարբերվում են բուն ածանցներից: Դրանից ելնելով՝ Լ. Հովսեփյանը հետևյալ միտքն է արտահայտում. «...ավելի ճիշտ կլիներ երրորդ խմբի ածանցները դասել այսպես կոչված ածանցակերպների շարքը, որոնք օժտված են թե՛ արմատի և թե՛ ածանցի հատկանիշներով՝ կախված իրենց բաշխման, գործառության և իմաստային առանձնահատկություններից»¹¹:

Ավելորդ չենք համարի նաև հնարավորինս հակիրճ ներկայացնել Հ. Աճառյանի կողմից հունաբան շրջանի մի քանի հայ հեղինակների գործերի՝ հունարենի

⁵ Նշվ. աշխատություն, էջ 51-52: Նույն տեսակետը պաշտպանում է նաև սույն հոդվածում՝ «Հունաբան հայերենը և նրա մշակված նախածանցների համակարգը», ՊԲՀ, 1993, № 1-2, էջ 7-14:

⁶ Ա. Մուրադյան, *Հունաբան դպրոցի ժամանակագրության հարցը*, Միջազգային հայերենագիտական գիտաժողով, Ե., 1984, էջ 410-420:

⁷ Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, II մաս, Ե., 1951, էջ 143-144:

⁸ Ս. Ղազարյան, *Հայոց լեզվի համառոտ պատմություն*, Ե., 2006, էջ 175:

⁹ Լ. Հովսեփյան, *Գրաբարի բառակազմությունը*, Ե., 1987, էջ 162:

¹⁰ Բնագրային օրինակները տե՛ս *Հայկական համաբարբառ*, Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց (№6), կազմ. Ա. Մարգարյան, Ե., հ.1-3, 1975-1978, Ղազարայ Փարպեցույ թուղթ առ Վահան Մամիկոնեան (VI-2), կազմ. Հ.Հովհաննիսյան, Ե., 1973:

¹¹ Նշվ. աշխ., էջ 163:

հետևողությամբ կազմված բառերի քննությունը, որն անմիջականորեն առնչվում է մեր ուսումնասիրությանը: Եղիշեի երկում Աճառյանը նկատում է կասկած հարուցող հինգ բառ, որոնց մեջ է նաև Փարպեցու գործածած *վերաբերիմ* օրինակը: Մինչդեռ բոլորն էլ, ըստ Աճառյանի, «թեև հետմետրոպայան, բայց հունաբան դպրոցի բառեր չեն»: Այնուհետև անցնելով Փարպեցուն՝ նշում է. «Փարպեցու բոլոր գրվածքներում երկու խնդրական բառ կա - *յեղափոխութիւն*, *շարագիր* և *շարագրէլ*»¹²: Բայց քանի որ Ագաթանգեղոսը գործածել է *յեղափոխ*, իսկ իր հատվածում էլ Փարպեցին անդրադարձել է նույն հեղինակի հիշյալ բառը ներգրավող պատմական վկայություններին, ապա հասկանալի է դառնում *յեղափոխութիւն* բառի աղբյուրը: ՌԻստի և այս մեկն էլ հունաբան դպրոցի բառ չէ: Իսկ մյուսների վերաբերյալ ասելիքն ամբողջությամբ հանգում է հետևյալին. «Երկրորդի վկայություններն են.- Կարգել զվաղնջուցն գրեալ *շարագիրս* տառիցն: Երրորդ պատմութիւնս այս ի կարգէ նորին գրոց *շարագրեալ* տկարութեանս մերում: Առաջին վկայության հետ ճիշտ նույն է գալիս Խոր. Գ. ծբ՝ Զվաղնջուցն գրեալ *շարագիր* տառից (ըստ Աբեղյանի հրատարակության), որ սակայն մյուս տպագրությանց մեջ ա՛յս ձևն ունի. Զվաղնջուց գտեալ նշանագիր տառից: Ըստ այսմ վիճելի են *շարագիր* (որ հունաբան բառ է, իբր sy'ngamma) և *նշանագիր* (որ մետրոպայան է. հմմտ. Կորինի «նշանագիրս աղփաբետաց», որ համապատասխանում է Փարպեցու «նշանագիր տառից» ձևին)»: Մյուս օրինակն էլ թեև ձեռագրերում նաև *դ*-ով է (*շարադրեալ*), բայց և «սրանցից թե՛ առաջինը (=syngra'pho) և թե՛ երկրորդը (= syntithemi) հավասարապես հունաբան են»¹³: Եվ այս մեկն էլ համարում է հունաբան դպրոցի առաջին և միակ բառը, որ գործածվել է V դարի վերջից: Սա հատկապես այն պարզ պատճառով, որ Աճառյանը ևս Խորենացուն համարում է VI դարի պատմիչ: Բայց առավել տարածված է այն տեսակետը, որ Խորենացին ստեղծագործել է Փարպեցուց առաջ: Ըստ Մ. Աբեղյանի՝ նա իր Պատմությունը վերջացրել է «մոտ 480 թ., երբ մոտավորապես 65-70 տարեկան կլինեի և կարող էր ասել՝ «ես այր եմ ծերացեալ»¹⁴: Իսկ Խորենացու մոտ, ինչպես և նկատում է Հ. Աճառյանը, հունաբան նախամասնիկներով կազմությունները համեմատաբար լայն ծավալով են: Հատկանշական է, որ Փարպեցու երկերի բառապաշարում տեղ գտած վերոհիշյալ օրինակներից շատերն Աճառյանի կողմից չեն դիտարկվել հատկապես այն պարզ պատճառով, որ նա պարզապես չի ընդունում կամ իր ցանկում չի ներառել հունաբան *թեր*-,

¹² Նշվ. աշխ., էջ 155:

¹³ Նույն տեղում, էջ 156:

¹⁴ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 153:

նախ-, *համ-* նախածանցներ: Եթե Հ. Աճառյանը, համաձայն իր ըմբռնումների, հունաբան նախածանցով մեկ բառ է մատնանշում Փարպեցու երկում, ապա Լ. Հովսեփյանի ներկայացրած բառացուցակներում¹⁵ որպես այդպիսիք են նաև՝ *համա-ծին*, *համարձակ*, *տարակոյս*: Աճառյանի դիտարկումներից, թեկուզ Եղիշեի գործածած իր իսկ խոսքով «կասկածելի հինգ բառերի» հունաբան դպրոցին չպատկանելու նկատառումից, հասկանալի է դառնում, որ նույն «հետմետրոպյան» շրջանի գործերում հիշյալ բաղադրիչների նույնարժեք գործածության դեպքում անգամ տարբերակելի են հունաբան հայերենին հատուկ և ոչ հատուկ բառային միավորներ: Այս պարագայում, անշուշտ, խոսք անգամ չի կարող լինել նմանօրինակ այն բառերի մասին, որոնք քիչ է որ ավանդված են ամենավաղ հայատառ գործերում, նաև առանձին դեպքերում ի հայտ են գալիս բավականաչափ լայն գործածությամբ: Մինչդեռ ուրիշ աշխատություններում վերը հիշատակված նախաբաղադրիչներով գրեթե բոլոր բառերն անխտիր դիտվում են «հունաբան նախածանցներով»: Այսպիսի ըմբռնման դեպքում, բացառությամբ *քորեպիսկոպոս* բառի, որ իր ամբողջության մեջ փոխառություն է հունարենից, հունաբան նախածանցներով են վերոընդգծված մյուս բոլոր բառերը:

Հունաբանության դրսևորում է նաև բարդ բառերի բաղադրիչների՝ հայերենին ոչ հատուկ այնպիսի շարադասությունը, որ վերջին բաղադրիչն է ստորադաս նախորդին և ոչ թե հակառակը, որ բխում է հայերենի բառակազմական ընդհանուր օրինաչափությունից: Այսպիսով, հունաբան կազմություններ են բառարանային տվյալներով միայն Փարպեցու վկայությամբ *ջնջազիր* և *սարահարթ* բառերը: Առաջինի իմաստը եթե բխեր *ջինջ* (մաքուր, պարզ) և *զիր* բաղադրիչներից, ապա բնական է, որ հունաբան կառույց չէինք համարի, մինչդեռ այստեղ «զիրը ջնջված» իմաստն է՝ ՆՀԲ-ի մեկնությամբ «որոյ գիրն է ջնջեալ, եղծեալ». «Եւ հուսկ յեզր մագաղաթին, հեռի ի *ջնջազիր* կարգացն, դարձեալ տեսանէի այլ ևս կարգ մի և կէս կարգի», «.... և ի միջոյ կողման մագաղաթին.... երևէին այլ կարգք ինչ եղծեալք *ջնջազիրք*», «.... երևեցաւ ի միջոյ կողմն մագաղաթին, հեռի յոսկէգիր կարգացն, կարգք ինչ խանգարեալք և *ջնջազիրք*»: Մյուս բառն էլ միայն մեկ գործածությամբ է հայտնի, և ՆՀԲ-ում էլ բացատրված է «որոյ սարն է հարթ՝ իբրև զհովիտ. հովտաձև». «Իսկ ի լանջակողմանսն կամ ի *սարահարթ* տեղիս սփռեալ»: Հայերենի համար, իհարկե, օրինաչափական կլինեին նշյալ իմաստները կրող «գրաջինջ» և «հարթասար» կառույցները, որոնցով, սակայն, ըստ գրաբարյան բառարանների,

¹⁵ Լ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 165-168:

վկայություն չկա:

Հունարեն բնագրերի և հայերեն թարգմանությունների անմիջական համեմատությունը Գոհար Մուրադյանին թույլ է տալիս արձանագրել «հունարենության տարաբնույթ դրսևորումների» մասին¹⁶, որոնցից շատերի վերաբերյալ հայերենագիտության բնագավառում դեռևս խոսք չի եղել: Դրանցից որոշ իրողություններ արտացոլված են նաև Փարպեցու գործերում: Այսպես.

«Ժխտական «ան-» մասնիկով սկսվող՝ ապառնի «-ելի»-ով դերբայները, որպես հունարեն բայածականների համարժեք»¹⁷ - *անապականելի, անկարծելի, անմեղադրելի, անհաւատալի*:

Ի դեպ, հիշատակման ենթակա է այն, որ դեռևս Վիեննայի Մխիթարյանները ոսկեդարյան և հետոսկեդարյան հայերենի տարբերակիչ իրողությունների մեջ որպես ոսկեդարյանին ոչ հատուկ երևույթ վկայակոչում էին. «-ան մասնիկով կազմված բացասական բառերը չեն կարող իրենց վերջում կրել -ելի մասնիկը»¹⁸: Մինչդեռ, ինչպես նկատում է Վ. Առաքելյանը, այդպիսի օրինակներ կան նաև մեսրոպյան հայերենում: Միայն թե հետագայում գործածությամբ հաճախականացել են¹⁹:

«Հունարանություն են և ածականներից զանգվածաբար կերտված մակբայները հունարեն –ωσ-ին համարժեք «-բար» կամ «-պես» վերջածանցներով»²⁰: Այդպիսի բազում օրինակներ կան նաև Փարպեցու գործերում: Եթե հիշյալները հունարեն են, ապա հասկանալի է, որ հայերենին բնորոշ են առանց այդ մասնիկների նույնարժեք գործածությամբ օրինակները: Չենք կարող ժխտել, որ գրաբարյան տեքստերում տվյալ ածանցներով մակբայների կիրառությունը սովորական տպավորություն կարող է գործել այսօրվա ուսումնասիրողի վրա, քանի որ երևույթը փոխանցվել է ժամանակակից գրական հայերենին: Մինչդեռ ածականական- որոշչային գործածությունը միանգամայն արհեստականության և օտարության երանգ է հաղորդում: Իսկ Փարպեցու երկերում բավական շատ են նման կիրառությունները և հատկապես՝ -պէս վերջածանցով: Այսպես. «.... ոչ կարեր հանդուրժել սաստիկ բռնութեան աներոյն, յաղագս *հզօրապէս* ճոխութեանն....», «.... հեղուկ և քահանայից ընտրելոց Աստուծոյ և *ճշմարտապէս* հովուաց զարին ի

¹⁶ Գ. Մուրադյան, Հունարեն դպրոցը և դասական հայերենը (դոկտորական ատենախոսություն). Մեղմագիր, Ե., 2005:

¹⁷ Նշվ. աշխ., էջ 12:

¹⁸ Վ. Առաքելյան, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության (V դար), Ե., 1981, էջ 92:

¹⁹ Նշվ. աշխ., էջ 98-99:

²⁰ Գ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 20:

պարանոցաց իւրեանց», «....ետ նմա զայնպիսի շնորհս *առաւելապէս* գիտութեան», նույնպէս՝ *առաւելապէս* պատիւ, *հաւաստապէս*, *միանձնապէս* միութիւն, *մեծապէս* շքեղութիւն, *սհաւորապէս* երդումն (կա նաև՝ *սհաւոր* երդումն) և այլն:

Հայերենի համար ոչ սովորական, ամենայն հավանականությամբ հունաբան իրողություններ են անորոշ դերբայով և *-ութիւն* ածանցով կազմությունները²¹: Փարպեցու գործերում առկա են՝ *աստելութիւն*, *երնելութիւն*, *լինելութիւն*, *կամելութիւն*, *գիտելութիւն*. Ընդ որում, համաձայն բառարանային տվյալների, վերջին երկուսի առաջին վկայությունը Փարպեցունն է. «Այդ հրամանիդ տեսութիւն և *գիտելութիւն*... յայտնի է ամենայն Արեաց և անարեաց», «.... որոյ *կամելութեան* ամենայն դժուարինք և անհնարինքն դիրինք են»:

Ուշագրավ օրինակ է նաև հետևյալը՝ *սիրելապէս*. «....պահեսցէ սիրելապէս և բազում շքեղութեամբ», «....սիրելապէս ընդունելութիւնս ունէր ընդ կապեալ նախարարս Հայոց»:

Թէև վերջինները Գ. Մուրադյանի ուսումնասիրության մեջ բացակայում են, բայց և կան նկատված ուրիշ՝ թե՛ բառապաշարային և թե՛ քերականական (հատկապէս շարահյուսական) հունաբանություններ, որոնցից որոշ դրսևորումներ նույնպէս առկա են դիտարկվող երկերում: Ճիշտ է, հիշյալ աշխատության մեջ Փարպեցու վկայությամբ հունաբան իրողությունների մեկ-երկու օրինակ է բերում Մուրադյանը, բայց և աշխատանքի «Եզրակացություններ» բաժնի վերջում նշում է. «Մեզ հաջողվել է Ղազար Փարպեցու՝ 5-6-րդ դարերի սահմանագլխին շարադրված «Պատմության» մեջ և դրանից էլ վաղ գրված «Թղթում» գտնել հունաբան դպրոցի առաջին շրջանում, ինչպէս նաև նախահունաբան թարգմանություններում կերտված մի շարք նորաբանություններ ու շարահյուսական հունաբանություններ»:

Գ. Մուրադյանը իր դոկտորական ատենախոսության «Նկատառումներ արձանագրված հունաբանությունների վերաբերյալ» բաժնում, անդրադառնալով քերականական հունաբանություններին, մի քանիսի առումով հետևյալ դիտողությունն է անում. «Մյուս քերականական հունաբանությունների նպատակն էր դա-

²¹ Նաև նկատի ունենալով նման իրողությունները՝ մի առիթով Լ. Հովհաննիսյանը նշում է. «Անորոշ և ենթակայական դերբայների հիմքով կազմությունները հաճախական չեն, սրանք թերևս հունաբանության դրսևորումներ են» (Գրաբարի բառապաշարը (V դար), Ե., 2006, էջ 249): Իսկ Ս. Ղազարյանի ներկայացրած հունաբան բառային միավորների ցուցակում գտնում ենք նաև *թուելութիւն* (Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 1981, էջ 165):

սական լեզվում բացակայող նոր ձևերի ստեղծումը. «-իլ»-ով կրավորական անորոշ դերբայը, «-իւր» կրավորական վերջավորությունը...»²²: Փարպեցու երկերում վերջինների օրինակներ ևս արձանագրվել են: Պետք է նատել, որ դրանք մասամբ չեզոք սեռի իմաստով են. *հաշիլ, տանջիլ, մատնիլ, մոլորիլ, պսակիլ, վախճանիլ, վիրավորիլ, վճարիլ*. «...որպես նշմարեալ *երևիւր* իբրև գրով երանելի Խուժկին», «Եւ կեցեալ ամս երանելոյ երիցուն Խորենայ անդէն յԱսորեստանի *վախճանիւր*», «...բազում աշխատութիւն ի տեղոջն *ցուցանիւր*», «...գերկնաթոյճ զճանապարհէն յաւիտենից բարութեանցն ընտրեալ *հետևիւր*»:

Այն հարցին, թե հիշատակված իրողությունները որքանով են պատկանում հենց Ղ. Փարպեցու գրչին, ոչ ոք չի կարող հստակ պատասխանել, քանի որ այդ երկերը հետագա ընդօրինակությունների միջոցով են մեզ ավանդվել: Այս պարագայում հնարավոր է, որ հետագա դարերի ընդօրինակողները նորամուծություններ են կատարել, մանավանդ որ եղած ձեռագրերում ու պատառիկներում առկա են որոշ տարբերություններ: Անշուշտ, հայերենը գրավոր ավանդույթի սկզբից ի վեր ազդվել է հունարենից, ուստի և չի բացառվում, որ թվարկված իրողությունները, եթե ոչ ամբողջությամբ, մասամբ Փարպեցու վկայությամբ են:

Valentin Khachatryan - Greek Appearance in the Case of Gh. Parpetsi - This article examines some of the Greek-influenced words and grammatical realities that are found in the works of Parpetsi. Prepositions, suffixes and compound words have been noticed, which are unusual for Armenian and are typical of Greek word-formation.

Валентин Хачатрян - Греческие дисплеи в работах Л. Парпеци - В этой статье рассматриваются некоторые слов и грамматических реалий составлен под влиянием греческого, которые можно найти в работах Парпеци. Были замечены предлоги, суффиксы и сложные слова, которые необычны для армянского языка и типичны для греческого словообразования.

²² Նշվ. աշխ., էջ 22: